2011, ՄԱՐՏ Ա, ԹԻՎ 5 (337)

# Հայաստանյայց Եկեղեցի

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ՝ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ



*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքները ենք բերում տիկնանց և օրիորդաց` Կանանց տոնի` Մարտի 8-ի առիթով:*

*Այսօր բոլոր ասպարեզներում իրենց գործունեությամբ ու գովարժան ձեռքբերումներով, իրենց նվիրումով ու նախանձախնդրությամբ կանայք առատացնում են խնամքն ու հոգածությունը մեր կյանքում, նպաստ բերում Հայրենիքի շենացմանը, ազգային ու մշակութային մեր կյանքի առաջընթացին:*

*Արդարեւ, համազգային մեր կյանքում բացառիկ է լուսերամ հայ կնոջ առաքինազարդ նկարագիրը, եւ հավետ օրինյալ է նրա առաքելությունը՝ լինել խարիսխը հայ ընտանիքի, խտացումը սիրո, հավատարմության ու անձնուրաց նվիրումի:*

*Աղոթում ենք առ Աստված եւ մաղթում, որ գարնանաշունչ այս ուրախաբեր տոնը բերկրանք եւ ջերմություն բերի համայն տիկնանց ու օրիորդաց սրտերին, եւ Աստծո ամենախնամ Սուրբ Աջն օրհնի եւ շնորհազարդի նրանց կյանքը բարիքներով, խնդությամբ. որպեսզի խաղաղության մեջ, առ Աստված հավատով ու հույսով, հայրենի սուրբ ավանդներով մեծացնեն, կրթեն ու դաստիարակեն մեր զավակներին` ի բարօրություն հայրենական կյանքի շինության ու զարգացման:*

## Սրբոց Վարդանանց տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում



Մարտի 3-ին Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցին տոնախմբեց Սրբոց Վարդանանց զորավարաց հիշատակը: Տոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Պատարագ: Պատարագիչն էր Տ. Եղիշե վարդապետ Ավետիսյանը:

Քարոզի ընթացքում անդրադառնալով Վարդանանց պատերազմի ու քաջարի զորավարների նահատակության խորհրդին` պատարագիչ հայր սուրբը նաեւ շնորհավորեց բոլոր նրանց, ովքեր կրում են Վարդանանց հերոսամարտի քաջ նահատակների անունները, մաղթեց, որ Վարդանանց նվիրական ոգին երբեք չնվազի մեր ազգի մեջ, եւ նոր վարդաններ ու ղեւոնդներ ծնվեն` ի պաշտպանություն հայրենիքի եւ մեր սուրբ հավատի:

Սրբոց Վարդանանց զորավարաց հիշատակության օրը Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցին նշում է նաեւ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվանակոչության տոնը: Պատարագի ավարտին Իջման սբ սեղանի առջեւ, նախագահությամբ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպս Խաչատրյանի եւ մասնակցությամբ թեմակալ առաջնորդների ու Մայր Աթոռի միաբանության, կատարվեց Հայրապետական մաղթանք: Եկեղեցականաց դասը եւ ներկա բարեպաշտ ժողովուրդը միաբանաբար աղոթք բարձրացրին առ Աստված` Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անսասանության ու պայծառության եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի քաջառողջության, խաղաղ ու արգասաբեր հայրապետության համար:

## Հանդիսություն Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

Մարտի 3-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հովանու ներքո գործող` Էջմիածնի հայորդյաց տանը Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ Սբ Վարդանանց տոնին նվիրված հանդիսություն: Միջոցառումը կազմակերպվել էր Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Երեւանի պետական համալսարանի համատեղ ջանքերով:

Հանդիսությանը ներկա էին Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու թեմակալ առաջնորդներ, ԵՊՀ-ի ռեկտոր Արամ Սիմոնյանը եւ դասախոսական անձնակազմը, Մայր Աթոռի միաբաններ, ԵՊՀ-ի ուսանողներ եւ ճեմարանականներ:

ԵՊՀ-ի ռեկտոր Արամ Սիմոնյանն իր բացման խոսքում ամենքին շնորհավորեց Ս. Վարդանանց տոնի առիթով եւ երիտասարդներին մաղթեց իրենց սրտերում արթուն պահել Վարդանանց անմար հավատքն ու սխրանքը, վճռական լինել հայրենիքի ազատության ու հավատքի ամրապնդման մեջ:

Սրբոց Վարդանանց տոնի առիթով բանախոսեց նաեւ բանասիրական գիտ. դոկտոր Սամվել Մուրադյանը:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր պատգամն ու օրհնությունը հղեց երիտասարդներին:

Վերջում հանդես եկան ԵՊՀ-ի կամերային նվագախումբն ու երգչախումբը, ԵՊՀ-ի պարային համույթը, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի երգչախումբն ու սաները:

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ` ՍԲ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ



*«Որ ճշմարտութեամբ միացեալ է ընդ սիրոյն Քրիստոսի, հոգւոյն աչաւք տեսանէ զաներեւոյթ յստակ լոյսն ճառագայթից իմանալի արեգական»*

*(Եղիշէ)*

*«Որ կորուսցէ զանձն իւր վասն Աւետարանին, ապրեցուսցէ՛ զնա» (Մարկ. Ը 35)*

*Հայրապետական օրհնությամբ ողջունում ենք ամենքիդ, որ համախմբվել եք` հանդիսավոր միջոցառմամբ նշելու Սրբոց Վարդանանց տոնը: Գոհունակություն է Մեզ համար, որ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի սաները եւ, առաջին անգամ, Երեւանի պետական համալսարանի սաները դասախոսների առաջնորդությամբ, իրենց միասնական մասնակցությամբ պիտի շուք հաղորդեն այս հանդիսությանը: Այս առիթով Մեր գնահատանքի խոսքն ենք ուղղում Երեւանի պետական համալսարանի հարգարժան ռեկտորին եւ ռեկտորատի բարեջան անդամներին, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսչին եւ տեսչությանը, սիրելի դասախոսներին ու սաներին` բոլորիդ շնորհավորելով Վարդանանց ազգային մեծ տոնի եւ ձեր անվանակոչության առիթով:*

*Սիրելի՛ զավակներ Մեր, այսօր հոգու խնդությամբ ենք նշում տոնը Սրբոց Վարդանանց, ովքեր խիզախության ու անձնազոհության, Հայրենյաց սիրո ու պայծառ հավատքի մեծագույն օրինակը տվեցին հավատավոր մեր ժողովրդին: Մեր պատմությունը հաճախ է գրվել նահատակների ու մարտիրոսների արյամբ, սակայն նրանց քաջագործությամբ է, որ հարատեւել է մեր ազգը, փորձություններ հաղթահարել եւ շենացրել իր Հայրենիքն ու Եկեղեցին:*

*Կան հաղթանակներ, որոնք հավերժի խորհրդով են դրոշմված եւ նման Քրիստոսի խաչակրության` բերում են հարություն ու կյանք, ոգեշնչում, անկոտրում ոգի եւ զորացնող քաջալերություն ազգին: Վարդանանց այսօրինակ սխրանքն է, որ պայքարների ու մաքառումների մեջ ազգիս հայոց եղավ հառնելու եւ հայրենաշեն ու ազգաշահ գործեր կերտելու անսպառ ոգեշնչում, դժվարությունների մեջ եղավ հավատքի եւ հույսի լուսավառ փարոս ու նորանոր մեծ հաղթանակների առաջնորդեց մեր ժողովրդին: Ավետարանի համար կյանքը տալու Քրիստոսի պատվերը, որ իրագործված ենք տեսնում Սուրբ Վարդանանց հերոսության մեջ, պատվեր է յուրաքանչյուր մարդու, նաեւ ողջ աշխարհին` հոգեւորը կարեւորելու, բարձր արժեքներով առաջնորդվելու, որո՛վ միայն մարդը կարող է փրկել ու ապրեցնել իր անձը, իր նվիրական Հայրենիքը ու սիրելի ժողովրդին: Մեր ազգի ուժը առաքելահաստատ հավատքի մեջ է, որ լուսավառ է հայորդյաց հոգիներում մեր Սուրբ Եկեղեցու հովանու ներքո: Դարեր շարունակ աննկուն հավատքով եւ հոգու զորությամբ է հարատեւել մեր ժողովուրդը, հոգեւորն է եղել այն հիմքն ու վեմը, որի վրա հաստատուն են մնացել մեր ինքնությունը, մշակույթը, ազգային ինքնագիտակցությունը, որոնցով պայքարել ենք ու հերոսացել` հանուն Հայրենիքի ու հավատքի, հանուն մեր պետականության հաստատման ու առաջընթացի: Քրիստոսասեր մեր ժողովուրդը հոգու անպարտելիությամբ է հարատեւել, քանզի մարմինը կարող է եւ պարտվել, բայց ոչ ոք չի կարող պարտության մատնել հավատավոր հոգին: Այս համոզումով է, որ եկեղեցական այրերը եւ նախարարները պատասխան գրեցին հավատափոխություն եւ ուրացում պարտադրող թշնամուն` ասելով. «Յայսմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խախտել ...աւասիկ կամք զբոլոր մարմինս տուեալ ի ձեռս քո. վաղվաղակի արա զինչ եւ կամիս: Ի քէն տանջանք եւ ի մենջ յանձնառութիւնք»:*



*Շարունակությունը` էջ 2*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՀԱԿՈԲ Դ ՋՈՒՂԱՅԵՑԻ (1655-1680)

*Սկիզբը՝ 2010-ի թիվ 22-24, 2011-ի թիվ1-4*

Եղիազարի հակառակորդներն էլ եկան այն մտքին, որ կարելի է հարվածել արդեն թուլացած Եղիազարին: Նրա դեմ բողոքելու համար Երուսաղեմից Կ. Պոլիս եկավ Մարտիրոս Կաֆացին, որի դերն ի չիք էր դարձել Եղիազարի ստացած հրովարտակներով: Աստվածատուր պատրիարքին ու Մարտիրոս Կաֆացուն միացավ նաեւ Հակոբ կաթողիկոսը: Կաֆացին Կ. Պոլսում իր շուրջը համախմբեց բոլոր հակաեղիազարյաններին՝ ջահուկյաններին, թըլթըլյաններին եւ արեւելցիներին: Մի պահ եղիազարյաններն երերացին եւ անգամ հաշտության առաջարկ արեցին: Գործին խառնվեցին Աբրոն եւ Քյոմուրճյանը: Կաֆացին ուզեց ժամանակ շահել եւ հարձակման անցնել ու անգամ պատրիարքությունն իր անունով դարձնել: Դրան նրա համախոհները կողմ էին, քանի որ Աստվածատուրը ծերացել էր: Գործարքի մեջ մտան մեծ վեզիրի ավագ պաշտոնյայի հետ: Սա մյուս կողմի հետ էլ բանակցեց, որ տեսնի, թե ով ավելի շատ կաշառք կտա: Այսպես շարունակվեց մինչեւ մեծ վեզիրի Կ. Պոլսից մեկնելը՝ Կրետեի պատերազմի առիթով: Նրա ետեւից գնաց Մարտիրոսը եւ ամբաստանագրերը մատուցեց մեծ վեզիրին: Սակայն Աբրոն կարողացավ մեծ վեզիրին համոզել, որ խնդրի լուծումն Աստվածատուրին եւ Մարտիրոսին գործերից հեռացնելն է ու ամեն ինչ Եղիազարին հանձնելը, որը թե՛ ունակ եւ թե՛ տերությանը հավատարիմ մարդ է: Եղիազարն էլ, իր դիրքերն ամրացնելու համար, նամակներ բերեց Արեւմտյան Հայաստանի քաղաքներից եւ Օսմանյան տերության հայաշատ վայրերից, որոնք գանգատվում էին Հակոբ կաթողիկոսի նվիրակներից եւ գոհունակություն էին հայտնում Եղիազարի վերաբերյալ, որը ձրի մյուռոն էր բաժանում: Նման նամակներ եղան նաեւ Կ. Պոլսի հայությունից: Մեծ վեզիրն Աբրոյի ազդեցությամբ հաստատեց Եղիազարի կաթողիկոսությունը եւ տվեց Երուսաղեմի պատրիարքությունը՝ 1666-ի մարտի 31-ին:

Գործը հաջողությամբ գլուխ բերելով՝ Եղիազարը հրաման ուղարկեց Երուսաղեմ, որ Հակոբ կաթողիկոսին, որպես հյուրի, պատվով ճանապարհեն, իսկ եթե միջամտի գործերին, բռնությամբ վտարեն: Հակոբը, միաբանության համար խնդիրներ չստեղծելով, քաշվեց հունաց վանքը եւ որոշեց Կ. Պոլիս գնալ: Իսկ դա դժվար էր, քանի որ միջոցները սպառվել էին: Նա պարտք վերցրեց: Եղիազարն էլ պատրաստվում էր Երուսաղեմ գնալ, սակայն սկզբում ուզեց եկեղեցական հանդեսներով փառավորվել մայրաքաղաքում ու յոթ եպիսկոպոս ձեռնադրեց: Սուրբ վայրերի համար նվերներ հավաքելով՝ նա 250 ուխտավորների կարավան կազմեց եւ ուղեւորվեց Երուսաղեմ: Հակոբը եւ Եղիազարը ճանապարհին իրար չհանդիպեցին: Հակոբը եկավ մայրաքաղաք՝ իր պարտատերե-



րի հետ, իսկ Եղիազարը հատուկ հրովարտակ էր ստացել՝ Սբ Գեթսեմանի վրա պատարագելու համար, որը հայերի հին իրավունքն էր, սակայն լատինները դրա վրա արգելք էին դրել: Այսուհանդերձ՝ չկարողացավ դա կատարել: Նա 1667 թվի հունվարի 6-ին Երուսաղեմում կատարեց մյուռոնի օրհնությունը: Իսկ հունվարի 27-ի կոնդակով դա անվճար ուղարկեց իր թեմերը: Հետո նա Երուսաղեմում եւ Յոպպեում ձեռնամուխ եղավ շինարարական գործունեության: Միաբանությունն ստիպված էր հնազանդվել նրան:

Հակոբին, Սկյուտարից սկսած, շատ դիմավորողներ եղան: Ջահուկյանները, արեւելցիները եւ թըլթըլյանները նրան ընդունեցին մեծ պատվով եւ կծու ակնարկություններ էին անում Եղիազարի հասցեին: Հակոբը դրանք լսում էր, բայց չէր արձագանքում եւ միայն սիրո քարոզներ էր կարդում: Նրա այդ վարքագիծը մեծ տպավորություն թողեց բոլորի վրա: Անգամ եղիազարյաններն սկսեցին նրան մերձենալ: Աբրոն նույնիսկ կոչ արեց նրան համաձայնել, որ Եղիազարն օսմանյան գավառների վրա կաթողիկոսի, իսկ նա հայրապետություն անի պարսկահայ գավառների վրա: Հակոբը մեղմ բացատրում էր ազգի համար դրա վտանգավոր հետեւանքները, ինչին Աբրոն ոչինչ ասել չէր կարողանում: Ի վերջո, շատ եղիազարյաններ դարձան հակոբական: Նրանք խոստանում էին վերականգնել Էջմիածնի իրավունքներն օսմանյան գավառների վրա: Հակոբին շատ օգնեցին Խոսրով եւ Միրզա ջահուկյանները, եւ որոշվում է, որ կաթողիկոսն Ադրիանուպոլիս գնա ու սուլթանին ներկայանա: Խայմազ խանի խորհրդով աղերսագիր է պատրաստվում, որը կաթողիկոսը պետք է ներկայացներ սուլթանին՝ մյուս ձեռքին ունենալով Փիլիպոսի հրովարտակը: Կաթողիկոսը լավ տպավորություն է թողնում սուլթանի վրա, որը ճանաչում է իր՝ Փիլիպոսին տված հրովարտակը եւ Ղայմազ խանի խորհրդով՝ Եղիազարին զրկում է բոլոր իրավունքներից: Դա եղավ այն ժամանակ, երբ Եղիազարին Երուսաղեմում թվում էր, որ ինքը լրիվ ապահով է: Անգամ Օնոփրիոսը հեռացավ Եղիազարից եւ անցավ Հոկոբի կողմը՝ զղջալով նախորդ ընթացքի համար: Կաթողիկոսը նրան ուղարկեց Էջմիածին՝ որպես աթոռակալ՝ հավատալով նրա պատիր խոսքերին:

Հակոբը, որ բոլորի սիրելին էր դարձել Կ. Պոլսում, տեղում կարգադրություններ արեց: Իրեն տրված՝ Երուսաղեմի պատրիարքությունը նա փոխանցեց Կաֆացուն, որը նրա հրամանագրով գնաց Եղիազարին հեռացնելու: Աստվածատուրի իրավունքը խախտվում էր, սակայն նրա տկարությունը տեսնելով՝ կաթողիկոսը նրան այլեւս հարմար չէր գտնում պատրիարքության աթոռին: Կաթողիկոսի աջքից ընկել էր Հովհաննես Թութունչին, որը փորձել էր չճանաչել Էջմիածնի իրավունքը: Թութունչին սիրելի չէր նաեւ ժողովրդին, եւ Հակոբը նրան զրկեց պատրիարքությունից եւ այն տվեց Սարգիս Թեքիրտաղցուն: Դրա համար նա պետական հրովարտակ ձեռք բերեց: Հակոբը հեշտությամբ կարողացավ իր պարտքերը վճարել՝ ժողովրդի հոժար օգնությամբ եւ նվերներով: Նա իր պարտքերը վճարեց մինչեւ Զատիկը եւ գարնան սկզբներին ուղեւորվեց Էջմիածին՝ հաջողելով բոլոր հարցերում:

*Շարունակությունը՝ էջ 4*



## Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս Ներսիսյանի այցը Լատվիայի Հանրապետություն



Լատվիայի նախագահ Վալդիս Զատլերսի հրավերով Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս եպս Ներսիսյանը մարտի 9-ին մեկնեց Ռիգա՝ մասնակցելու Լատվիայի եւ Հայաստանի նախագահների հետ հանդիպմանն ու պաշտոնական ճաշկերույթին:

Մինչ պաշտոնական հանդիպումը սրբազան հայրը Ռիգայի նորակառույց Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում հանդիպեց հայ համայնքի հետ, մասնակցեց հոգեւոր ժողովին, որտեղ քննարկվեցին նորակառույց եկեղեցու օծման, եկեղեցու հովանու ներքո գործող կիրակնօրյա դպրոցի գործունեության եւ համայնքային կյանքի աշխուժացման հետ կապված հարցեր: Հանդիպման եկած բազմաթիվ հայ հավատացյալներին սրբազան հայրն իր օրհնությունը բաշխեց՝ հորդորելով ապրել եկեղեցու շուրջը համախմբված, քրիստոնեական այն արժեքներով, որոնցով ապրել ու արարել են մեր նախնիները:

Երեկոյան սրբազան հայրը մասնակցեց երկու նախագահների եւ պաշտոնական այրերի հետ հանդիպմանն ու ճաշկերույթին:

Հաջորդ օրը Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս Ներսիսյանը համայնքի հոգեւոր հովիվ Տ. Խոսրով քհն. Ստեփանյանի, բարերարների, ծխական խորհրդի անդամների, բարեպաշտ հավատացյալների հետ Սբ Գր. Լուսավորիչ եկեղեցում դիմավորեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին եւ պատվիրակության մյուս անդամներին: Եկեղեցում համատեղ գոհաբանական աղոթք կատարվեց: Սրբազան հայրը ողջունեց նախագահին եւ նրան ուղեկցող պետական այրերին, ապա հավատացյալներին իր խոսքն ասաց նախագահ Սերժ Սարգսյանը: Խոսելով համայնքի մասին՝ նախագահը հիշեց, որ իր նախարարության տարիներին Ռիգայում եկեղեցու շինարարական աշխատանքները դեռ ավարտված չէին, իսկ այսօր, շնորհիվ ռուսահայոց առաջնորդ Տ. Եզրաս եպս Ներսիսյանի ջանքերի, ոչ միայն կանգուն է եկեղեցին, այլեւ ձեւավորվել է եկեղեցասեր, համերաշխ համայնք: Նախագահ Սերժ Սարգսյանը Ռիգայի Սբ Գր. Լուսավորիչ եկեղեցուն նվիրեց քարե մանր կտորներով եւ յուղաներկով պատրաստված «Թուղթ խաչքար»:

Հյուրերին աղուհացով դիմավորած կիրակնօրյայի սաները արտասանեցին ու երգեցին հայրենիքի մասին երգեր: Տ. Եզրաս եպս Ներսիսյանը սաներին հորդորեց նախանձախնդիր լինել հայերենի իմացության եւ պահպանության գործում, սիրել Հայոց Եկեղեցին, լինել հայրենիքի եւ Սբ Էջմիածնի արժանավոր զավակը:

Մարտի 10-ին Եզրաս սրբազանը վերադարձավ Մոսկվա:

***Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի մամլո դիվան***

## ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ

Մարտի 3-ին Սբ Էջմիածնի հովանու ներքո գործող Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանում նշվեց Սրբոց Վարդանանց տոնը:

Մարդասիրականի սաները հանդես եկան Վարդանանց քաջերին նվիրված բեմականացմամբ, ուր նրանք մարմնավորել էին մեծ զորավարին ու նրա զինակիցներին: Իսկ երգչախմբի կատարմամբ հնչեցին Ավարայրի հերոսներին ձոնված շարականներ եւ երգեր: Ձեռնարկը եզրափակվեց հնդկահայոց հոգեւոր հովիվ, ճեմարանի կառավարիչ Տ. Խորեն աբղ. Հովհաննիսյանի խոսքով. «Հանդիսությունն այնքան հուզիչ էր, որ մեզ 1500 տարի հետ տարավ, տարավ դեպի Ավարայրի դաշտ, եւ մենք ականատես եղանք Վարդանանց հավատքին ու հայրենասիրությանը... Վարդանանց քաջերը մեզ ավանդեցին հավատարիմ մնալ Հայ Եկեղեցուն եւ Մայր հայրենիքին»: Հայր Խորենը պատգամեց լինել արժանի զինվորը Սուրբ Վարդանի եւ վառ պահել Վարդանանց հիշատակը:



## Նոր նշանակում

Ամենայն Հայոց Հայրապետի տնօրինությամբ Տ. Սեդրակ քհն. Ազնավուրյանը մարտի 20-ից իր հոգեւոր ծառայությունը կշարունակի Հարավային Ռուսաստանի հայոց թեմում:

## Կարգալույծ են հռչակվել

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ են հռչակվել Տ. Կտրիճ քահանա Դեւեջյանը՝ հիմք ընդունելով նրա՝ ամուսնալուծված լինելու պատճառով եկեղեցական ծառայությունից հրաժարվելու մասին դիմումը եւ Բուլղարիայի հայոց թեմի՝ Վառնայի հոգեւոր հովիվ Տ. Սարգիս քահանա Հովհաննիսյանը՝ հոգեւորականին անհարիր վարքագծի համար:

Կարգալույծ հռչակված հոգեւորականներն այսուհետ կդասվեն աշխարհականների շարքը եւ կկոչվեն ավազանի անունով՝ Արմեն Դեւեջյան եւ Արթուր Հովհաննիսյան:

# «ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ»-Ը ՄԻՇՏ ՈՒ ՄՇՏԱՊԵՍ ԱՐԴԻԱԿԱՆ...

Մեսրոպ Մաշտոցի աշակերտ եւ զինակից, մեծանուն իմաստասեր, հայագիր դպրության սկզբնավորողներից եւ նվիրյալներից մեկի՝ Եզնիկ Կողբացու կյանքի եւ գործունեության մասին քիչ բան է մեզ հայտնի: Մոտավոր հաշվարկներով՝ նա ծնվել է 380-ական թվականներին Արարատյան աշխարհի Կողբ գյուղում, որտեղից էլ ստացել է իր մականունը՝ Կողբացի: Եզնիկը սկզբից եւեթ հոգեւորական է եղել, աշակերտել է իր մեծանուն ուսուցչապետին՝ հայոց գրերի արարչին, հմտացել է ինչպես ասորական, այնպես էլ հունական դպրությունների ու լեզուների ուսումնասիրության մեջ: Կողբացին, լինելով ժամանակի ականավոր ուսումնական գործիչներից մեկը, բեղմնավոր կերպով զբաղվել է թարգմանչական ու խմբագրական գործունեությամբ:



Ըստ Կորյունի վկայության՝ հայ դպրության երկու ռահվիրաները՝ Մաշտոցն ու Սահակը, պատասխանատու հանձնարարություններով ուղարկում են Եզնիկին ասորական դպրության խոշոր կենտրոն Եդեսիա քաղաքը, որպեսզի նա, տեղում թարգմանություններ կատարելով, հայերենի վերածի ասորաց հոգեւոր հայրերի ավանդույթներն ու վարքագրությունները ամփոփող երկերը: Այդ մասին վկայություններ է թողել նաեւ պատմահայր Մ. Խորենացին:

Կողբացին, Եդեսիայում թարգմանական առաքելությունը հաջողությամբ ավարտելուց հետո, ինչպես նաեւ նրա զինակից Հովսեփ Պաղնացին անցնում են Կոստանդնուպոլիս, ուր առավել կատարելագործվում են հունարենի եւ արվեստների ուսումնասիրության մեջ:

Հայ մատենագիտությունը համոզված է, որ Եզնիկ Կողբացին ոչ միայն հմուտ պարսկագետ, հունագետ եւ ասորագետ էր, այլ նաեւ՝ եբրայագետ, այլապես նրան չէր հանձնարարվի այնպիսի պատասխանատու մի գործ, որպիսին Աստվածաշնչի հայերեն թարգմանության խմբագրումն է եւ համեմատումը՝ ասորերեն եւ հունարեն բնագրերի հետ:

Եզնիկ Կողբացու գործունեության բարձրակետը հանդիսանում է նրա տեսական-փիլիսոփայական երկը՝ «Եղծ աղանդոց» խորագրով, որով նա հայ իրականության մեջ հանդես է գալիս որպես խոշոր տեսաբան եւ աստվածաբանության կարկառուն մի հեղինակություն:

Վերոնշյալ աշխատությունը հեղինակվել է Վարդանանց պատերազմի նախօրյակին, եւ նրա անհրաժեշտությունը շատ էր զգացվում եւ կարեւորվում այդ տագնապալից ժամանակաշրջանում: Պետք է հիշել, որ 440- ական թվականների կեսերին եւ վերջերին Հայաստանում առկա հասարակական-քաղաքական մթնոլորտն այնքան թեժացած ու անհանգստացնող էր, որ հարկավոր էր գաղափարական եւ հոգեւոր առումներով եւս ժողովրդին նախապատրաստել՝ դիմագրավելու ահագնացող վտանգներն ու մարտահրավերները:

Բացի այդ, անկարելի է չմատնանշել այն իրողությունը, որ այդ ժամանակ երկրում աշխուժացել էին նաեւ ամեն կարգի աղանդներն ու հերձվածները, քրիստոնեական ուսմունքից խոտորված բազմերանգ ուղղվածությունների կրողներն ու կողմնակիցները:

Ուստի անհրաժեշտ էր գաղափարաբանական-փիլիսոփայական բարձր մակարդակով հակահարված տալ եւ մերկացնել վերջիններիս, ցույց տալ նրանց հոգեւոր սնանկությունը եւ տգիտությունը:

Ահա այս ամենի հաշվառումով ու հանրագումարով ծնվեց, լույս աշխարհ եկավ «Եղծ աղանդոց»-ը, որի հեղինակը նաեւ ազգային ազատագրական շարժման ակտիվ մասնակիցներից էր: Բավական է նշել, որ Եզնիկ Կողբացու անունը հայ մատենագրության մեջ հիշատակվում է Եղիշեի «Վասն Վարդանա եւ հայոց պատերազմին» աշխատության էջերում՝ 449 թվականին Աշտիշատի հանրահայտ ժողովին մասնակցած բարձր հոգեւորականության այլ ներկայացուցիչների հետ միասին: Իսկ վերոնշյալ ժողովը բուռն ու կրակոտ քննում էր պարսից արքունիքից ուղարկված չարագուշակ նամակը, որով առաջարկվում էր հայ ժողովրդին հրաժարվել քրիստոնեությունից եւ ընդունել զրադաշտականությունը:

Սակայն զրադաշտականությունն այլեւս տեղ չուներ հայ հասարակության առաջնորդող խավի համար, քանզի մեծ տեսաբան ու մտածող Եզ. Կողբացին յուր աշխատությամբ հիմնավոր, սպառիչ կերպով տվել էր զրադաշտականության դրույթների քննադատությունն ու հերքումը:



Անտարակուսելի է, որ «Եղծ աղանդոց»-ը հանդիսացավ հայ ազգային-ազատագրական պայքարի հոգեւոր-բարոյական հռչակագիրը:

Կողբացին սույն աշխատությունը հեղինակելիս գլխավորապես նպատակ է ունեցել պաշտպանել հայկական ու հայաստանյան հոգեւոր-բարոյական իրականության տիրույթները հերձվածողական-աղանդավորական տարբեր կարգի եւ բնույթի հարձակումներից, այդ պատճառով էլ երկի շարադրանքը գերազանցապես ստացել է հակաճառության եւ հերքումների բնույթ:

Նրա օգտագործած գլխավոր աղբյուրն Աստվածաշունչն է, որից բավական հաճախ է վկայակոչումներ կատարում: Կողբացին հատկապես խիստ ու հետեւողական կերպով քննադատում է զրադաշտական կրոնի դոգմաները՝ ցույց տալով զրադաշտականության բոլոր թերի կողմերն ու հակասությունները:

Մեծ մտածողը նաեւ անդրադառնում է հույն իմաստասերների տեսություններին՝ հեթանոսական աստվածների ջատագովության առնչությամբ, եւ մանրամասն ցույց է տալիս վերոնշյալ տեսությունների սնանկությունը:

Նա խիստ քննադատական հարվածն ուղղում է զրադաշտական կրոնի երկվության (դուալիզմ) դեմ, քանզի պարսկական կրոնը, ընդունելով չարի եւ բարու աստվածությունների համատեղ գոյությունը, հանգում էր նաեւ նյութի ինքնուրույն լինելու ընդունմանը:

Իսկ այդ դրույթն արմատապես հակասում էր քրիստոնեական միաստվածության գաղափարին:

Հայ մեծ մտածողը, անդրադառնալով չարի եւ բարու փոխհարաբերություններին, չարիք է որակում բոլոր այն գործողությունները, որոնք մարդկանց համար վնասակար հետեւանքներ են ունենում, իսկ ավելի գործնական հարթության վրա դնելով հարցադրումը՝ համոզմունք է հայտնում, որ հայ ժողովուրդն իր ողջ ուժերի նպատակասլաց համախմբման դեպքում կարող է հաղթահարել զրադաշտականության պարտադրման սպառնալիքը: Ահա այս կետում է , որ Կողբացին հանդես է գալիս որպես ճակատագրի բացասական ազդեցությունների դեմ ակտիվ պայքարի նախաձեռնող, որով եւ վարակում է իր ժամանակակիցներին ու հետագա սերունդներին:

Եզնիկ Կողբացու, ինչպես եւ Հայ Եկեղեցու ու գիտության մյուս սուրբ նվիրյալների՝ Մեսրոպ Մաշտացի, Մովսես Խորենացու, Սահակ Պարթեւի, Եղիշեի, Դավիթ Անհաղթի, Անանիա Շիրակացու, Գրիգոր Նարեկացու, Ներսես Լամբրոնացու, Գրիգոր Տաթեւացու ստեղծագործական անսպառ ժառանգությունը դարեր շարունակ նպաստել է հայ ժողովրդի ներքին եւ արտաքին ինքնության պահպանմանը եւ հոգեկան բարձր ու բյուրեղյա կերտվածքի ձեւավորմանը:

Հինգերորդ դարի հայ մեծագույն փիլիսոփա-մտածողի «Եղծ աղանդոց» աշխատությունը հայ սերունդների համար միշտ էլ մնացել է օրակարգային՝ երբեք չխամրելով ու չկորցնելով իր արդիական կենսատու նշանակությունը նաեւ այսօր:

*Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ*
*Պատմ. գիտութ. թեկնածու*

# ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

*Սկիզբը՝ էջ 4*

Քանզի ամէն բան, ըստ էութեան, գոյութիւն ունի Մարդեղութիւնից եկող այն հիկայական շարժման մէջ, որը ձգտում է դէպի Յիսուս Քրիստոս եւ կատարեալ դառնում Նրանով: Այսպիսով՝ Աստուծոյ Որդու մարդացումը դառնում է Նրա սեփական արարչագործութեան առանցքը, եւ աշխարհի հետ Նրա անձնական յարաբերութեամբ ամբողջ տիեզերքը վերածւում է մի գեղեցիկ համադաշնութեան՝ վերանորոգուելով իր սկզբնատիպի՝ անկողոպտելիութեան, անմահութեան եւ ազատութեան մէջ:

Նորկտակարանեան պատմութիւնները մեզ բազմաթիւ տեղեկութիւններ են հաղորդում Յիսուսի գործած հրաշք-բժշկութիւնների մասին՝ կաղի, կոյրի, անդամալոյծների, բորոտների բժշկութիւնները, դեւերի հալածումը: Այս բոլոր պարագաներում Նրա գործն Աստուծոյ զօրութեամբ իրագործուած հրաշքի առկայութեան փաստն էր, ինչպէս նրանց համար, ովքեր ստացան այդ բժշկութիւնը, այնպէս էլ ականատեսների: Յիսուսը բժշկում էր թէ՛ խօսքով եւ թէ՛ հպումով՝ մարդկանց ընդգրկելով Աստուծոյ ապաքինող ներկայութեան մէջ:

Աւետարաններն արձանագրում են, որ առաքեալները նոյնպէս անմասն չէին Յիսուսի բժշկող առաքելութիւնից, որոնց Նա ուղարկում էր հիւանդներին բժշկելու եւ տարածելու Երկնքի արքայութեան աւետիսը: Այս իմաստով՝ առաքելական քարոզութեան եւ գործունէութեան մէջ էական տեղ էին զբաղեցնում աղօթքը եւ Յիսուսի անուան հռչակումը: Այսինքն՝ դրանք իրականանում էին միայն հաւատքով եւ Տիրոջ անուան զօրութեամբ, որով նրանք կարողանում էին ընդդիմանալ խաւարի ուժերին եւ իրենց գործած հրաշքների միջոցով արտայայտել Երկնքի արքայութեան ներկայութիւնը: Առաքելական գործունէութեան մէջ հանդիպում ենք նաեւ բժշկութեան ժամանակ




իւղի կիրառութեան փաստի, երբ «ելեալ քարոզէին, զի ապաշխարեսցեն: Եւ դեւս բազումս հանէին եւ օծանէին իւղով»: Այսուհանդերձ, Եկեղեցին Մարկոս աւետարանչի այս տեղեկութիւնն ընկալել է ոչ թէ որպէս Հիւանդների օծման խորհրդի հաստատման փաստարկ, այլ նախատիպը կամ նշանակն այս խորհրդի: Եկեղեցու համար որպէս Հիւանդների օծման խորհրդի հիմնադրութիւն համարուել է Յակոբոս առաքեալի կարգադրութիւնը, որն իր բնոյթով աւելի ծիսական եւ խորհրդական սահմանում ունի, որտեղ առկայ են արդէն իսկ կազմակերպուող Եկեղեցու յատկանիշները, նրա ներքին ծիսական ուրուագիծը, ինչպէս նաեւ նրա ուղղուածութիւնն ու նպատակը, որ են անձի վերականգնումն ու փրկութիւնը թէ՛ հոգեւոր եւ թէ՛ մարմնական բժշկութեամբ: Այս կարգադրութիւնն էլ յետագայում դարձաւ այն հիմնաւորումը, որի միջոցով Եկեղեցում բժշկութիւնը, հետեւաբար եւ օծումը, ընկալուեց որպէս Երկնքի արքայութեան տեսանելի նշաններից մէկը, որն էլ այս եզրաշերտերով ընդգրկուեց Եկեղեցու խորհրդաբանական համակարգի մէջ:



# ՄԱՐԴՈՒ ԱՍՏՎԱԾԱՊԱՐԳԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Գաղտնիք չէ, որ մարդկային գործունեության ցանկացած հարցում առաջնային դերակատարություն ունի գիտակցությունը, որն, իհարկե, բխում է բանականությունից: Մարդն իրեն տրված բանականությամբ օժտված է կատարյալ ազատությամբ, ինչն աստվածաբանության մասնագետներն անվանում են աստվածապարգեւ ազատություն:

Ազատություն ասելով՝ իրավաբանները հասկանում են օրենքների շրջանակում մարդու գործողությունների լիակատարության հնարավորություն, մինչդեռ շատ գիտությունների ներկայացուցիչներ «ազատություն» բառն ըմբռնում են որպես սանձազերծվածություն, այսինքն՝ գործողությունների ազատություն՝ առանց սահմանափակումների: Այս ընկալումների տարբերությունները հստակորեն երեւում են մարդ - շրջակա միջավայր հարաբերություններում, ուստի անհրաժեշտ է ճշտել, թե, վերջին հաշվով, ինչպես հասկանալ ազատություն ասվածը:

Հայացք գցելով պատմական անցյալին՝ մենք տեսնում ենք, որ վաղուցեւեթ ազատության ըմբռնումը գիտակցվել է որպես հնարավորությունների ամբողջական օգտագործում: Բավական է նշել, որ էթնիկ հանրությունների մեծ մասը դարեր շարունակ զարգացրել է սեփական տնտեսությունը, մասնավորապես՝ գյուղատնտեսությունը՝ էքստենսիվ եղանակով, ինչը լիովին ենթադրում է հնարավորությունների օգտագործում սպառման ասպարեզում, մինչդեռ նույն բանական ազատությունը կարելի էր օգտագործել ինտենսիվ զարգացման ուղղությամբ, ինչի առաջին փորձերը կատարեցին միջագետքյան քաղաք-պետությունների ու վաղ եգիպտական թագավորության բնակիչները, որոնք, առանց վնաս հասցնելու շրջակա միջավայրին, սահմանափակ տարածքներում ծավալում էին իրենց տնտեսական գործունեությունը:

Հնարավորությունների ամբողջական օգտագործելիության դրույթի նորագույն օրինակ է միջուկային, քիմիական եւ կենսաբանական զենքերի գյուտը, ինչը, իրենից ներկայացնելով մարդկության ապագային սպառնացող մեծագույն չարիք, միեւնույն ժամանակ բավականին լրջորեն ցույց է տալիս մարդկային ազատության անշեղության երերունությունը:

Այսպիսով, մարդը շատ հաճախ չի կարողանում ընկալել սահմանը՝ իրական ազատության եւ մոլորության միջեւ: Հենց այստեղ էլ մարդու գիտակցական ընկալելիությանն օգնության են հասնում կրոնները: Դեռեւս անիմիստական պաշտամունքների ժամանակաշրջանում շրջակա միջավայրը պատշաճորեն տեղ էր գտնում մարդու «վախ եւ հարգանք» ուղիղ համեմատական շղթայում:

Մարդը, օգտագործելով իր բանականությունը, դարերի ընթացքում քաղաքակրթական առաջընթաց էր ապրում, ինչի արդյունքը պետք է լինեին պաշտամունքային համակարգերի վերափոխումը եւ շրջակա միջավայրի պատվումը՝ հեթանոսական դիցարանում բնության ուժերի աստվածների ու աստվածությունների ի հայտ գալու ճանապարհով:

Այնուհանդերձ, մարդ - շրջակա միջավայր հարաբերությունների գիտակցականության բարձրակետը ժամանակակից աշխարհի էթնիկ հանրությունների ճնշող մեծամասնության համար սահմանվում է համաշխարհային կրոնների կողմից: Թե՛ մահմեդականությունը եւ թե՛ բուդդայականությունը իրենց հետեւորդների համար հստակ սահմանաբաժանումներ են դնում շրջակա միջավայրի նկատմամբ վարվեցողության ազատության չափի մեջ:

Մեզ՝ Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու հետեւորդների համար անչափ կարեւոր են քրիստոնեական ազատության ըմբռնման սահմանաբաժանումները մարդ - շրջակա միջավայր հարաբերություններում, որոնցով էլ առաջնորդվել է հայ հասարակությունը՝ իր պատմության միջնադարյան, նոր եւ մասամբ՝ նորագույն ժամանակաշրջանում:

Այսպիսով, փորձենք դիտարկել, թե ինչպես է քրիստոնեությունը տեսնում այս օրինաց կարգը մարդ - շրջակա միջավայր հարաբերություններում: Այս հարցում նախ եւ առաջ ուշադրություն դարձնենք աշխարհի՝ աստվածային արարչագործությանը: Չէ՞ որ մարդուն տրվում է լիակատար ազատություն:

Սակայն այստեղ կա մի հանգամանք. հենց սկզբից Աստված փորձեց ստուգել մարդու բարոյական ազատությունը եւ բարու մեջ հաստատուն լինելու համար մարդուն պատվիրեց չճաշակել բարու եւ չարի իմացության ծառից:

Այստեղ մարդը կատարում է առաջին կործանարար քայլը. գործում է առաջին մեղքը, ինչը կարող ենք դիտարկել նաեւ որպես էկոլոգիական առաջին աղետ՝ զուտ հոգեբանական տեսանկյունից, քանի որ մարդ արարծը, չսահմանափակվելով իրեն տրված անսահմանափակ ազատությամբ, խախտեց միակ սահմանումը (այո՛, սահմանում եւ ոչ թե սահմանափակում, քանի որ իրականում այդ ծառի պտղի ճաշակել կամ չճաշակելն ամենեւին էլ չէր սահմանափակում մարդու ազատությունը, այլ ընդամենը՝ սահմանում էր նրա ազատությունների «օրենսգիրքը»), ինչը դարերի ընթացքում եւ հատկապես՝ 20-21-րդ դարերում մարդկության ապագայի դիմախեղման ճանապարհ էր հարթում:

Այսպիսով, քրիստոնեությունը կատարում է կարեւորագույն գործը էկոլոգիական աղետները չեզոքացնելու հարցում՝ ոչ թե վերացնելով հետեւանքները, այլ գիտակցական բանականության շնորհիվ կանխելով էկոլոգիական ճգնաժամի դրսեւորումները:

Արարչագործությունից զատ՝ փորձենք դիտարկել նաեւ նորկտակարանյան մի օրինակ, որտեղ Հիսուս Քրիստոս Ինքը ցույց է տալիս սահմանումը մարդու եւ շրջակա միջավայրի փոխհարաբերություններում: Խոսքը, իհարկե, «Տասը մնասներ»-ի առակի (Ղուկ. ԺԹ 11-27) մասին է, որտեղ ասվում է, որ մարդն Աստծուց իշխանություն է ստացել բնության վրա՝ ոչ միայն այն պահպանելու եւ անաղարտ տեսքով Աստծուն վերադարձնելու, այլ նաեւ այն բարձրացնելու, այսինքն՝ սրբացնելու, պայծառացնելու եւ Աստծու մեջ հաստատելու համար:

Այսպիսով, մարդու՝ բնության զարդը լինելու քրիստոնեական հաստատումը ոչ թե շրջակա միջավայրի նկատմամբ զուտ գերիշխող դիրք ունենալու մտադրությունների արտահայտությունն է, այլ աստվածապարգեւ ազատության շնորհիվ շրջակա միջավայրի պահպանման ու բարելավման գիտակցումը եւ մեխանիզմների ստեղծումն ու կիրառումը:

Մարդու աստվածապարգեւ ազատության հարցի առնչությամբ, որպես ամփոփում, մտաբերենք դպրոցներում աշակերտների կողմից հաճախ հնչող մի բարդագույն հարց. ինչո՞ւ էին կաթոլիկ հոգեւորականները հետապնդում, պատժում եւ անգամ այրում ուշ միջնադարում գիտական հայտնագործություններով հանդես եկող գիտնականներին:

Աշակերտները, հավատարիմ մնալով քննական մտածելակերպի սկզբունքին, պնդում են, որ դասագրքային այն ձեւակերպումը, թե կաթոլիկ հոգեւորականները խավարամիտ էին եւ այդ պատճառով էին հետապնդում գյուտարար գիտնականներին, իրենց համար ամենեւին էլ համոզիչ չէ:

Իհարկե, այս հրահիրիչ հարցն ստիպում է մտածել, որ միգուցե իսկապես այդ գյուտերը կաթոլիկ հոգեւորականների համար իրականում ոչ թե գյուտեր, այլ սրբազան գաղտնիքներ էին:

Ծայրահեղ դեպքում կարելի է խորհել, որ, փաստորեն, միգուցե այդպես նրանք ցանկանում էին փրկել հասարակությանը հախուռն զարգացումից եւ ներկայիս էկոլոգիական աղետալի ճգնաժամից՝ դարերի խորքից հասկանալով այդ գյուտերի հետագա բացասական հետեւանքները նաեւ, քանի որ սանձազերծ ազատությամբ օժտված մարդ արարածը, սահմանումներ չճանաչելով իր ազատությունների մեջ, ցանկացած ամենադրական գիտական հայտնագործության համար գտնում է նաեւ բացասական կիրառություն:

Եկե՛ք պարզապես խորհենք այս ուղղությամբ եւ վերստին արժեւորենք քրիստոնեական արժեհամակարգի՝ մարդ - շրջակա միջավայր հավասարակշռված հարաբերությունների բաղկացյալի կատարելությունը, որը կօգնի մեզ մշտապես արթուն լինել մեր բանականության մեջ:

*Միքայել ՄԱԼԽԱՍՅԱՆ*

# ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅՈՒՄ Ե-ԺԵ ԴԱՐԵՐՈՒՄ

Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս եպս Ներսիսյանի հրամանով եւ Ղազախստանի հայոց հոգեւոր հովիվ Տ. Մարկոս քհն. Սարգսյանի նախաձեռնությամբ 2010 թ. Ալմաթիում ռուսերեն թարգմանությամբ (թարգմանիչ՝ Կարլեն Զուրաբյան) վերահրատարակվել է Տ. Վռամ աբեղա Ղազարյանի «Հայ Առաքելական Եկեղեցին Միջին Ասիայում Ե-ԺԵ դարերում» աշխատությունը (հայերեն հրատ.՝ Երեւան, 2008 թ.):

Սույն աշխատությունը երկրամասի քրիստոնեական պատմության բնագավառում տվյալ ժամանակաշրջանի ու տարածաշրջանի Հայ Եկեղեցու պատմությանը նվիրված պատմագիտական առաջին ուսումնասիրությունն է: Նյութին հարակից լուսաբանվում են նաեւ Հայաստանի եւ այլ տարածաշրջանների պատմությանն առնչվող բազմաթիվ խնդիրներ:

Պատմահնագիտական տվյալների, արձանագրագիտական, դրամագիտական, պատմաաշխարհագրական, ուղեգրական, Ե-ԺԵ դարերի հայ պատմիչ-մատենագիրների սկզբնաղբյուրային եւ մերօրյա պարբերական մամուլում ու համացանցում տեղ գտած տեղեկությունների շնորհիվ՝ տարածաշրջանի քրիստոնեական պատմության մեջ ամբողջանում է Հայ Առաքելական Եկեղեցու շուրջ մեկ հազարամյա ներկայությունը: Միջին Ասիայի առաքելական ժամանակաշրջանից սկիզբ առնող քրիստոնեական պատմության մեջ հաստատագրվում են ազգային Հայ Առաքելական Եկեղեցու կրոնամշակութային միայնուն մասնակցությունը եւ ուրույն դերակատարությունը:

Վարդանանց համազգային շարժման ակունքների սկզբնավորումը Միջին Ասիայում՝ սկսած 441 թ., Է դարի սկզբին տարածաշրջանում ազգային-եկեղեցական թեմի ստեղծումը եւ նրա հերոսական ընթացքը, Ակ-Բեշիմի եկեղեցական կառույցը՝ գավիթավոր եկեղեցու հայկական ճարտարապետության առաջին նմուշ (Է դարի սկիզբ), սբ Մատթեոս ավետարանչի գերեզմանն ամփոփող Իսսիկ-Կուլի հայոց վանքի՝ հայոց եկեղեցապատկան լինելը, թեմուրյաններից՝ արյունարբու Լենկ-Թեմուրի հայանպաստ կեցվածքը եւ նրա թոռ, հայտնի «հումանիստ եւ աստղագետ» Ուլուգբեկի արյունոտ ու դաժան բռնությունները երկրամասի քրիստոնեության հանդեպ,- այս նյութերը աշխատությանը հաղորդում են պատմագիտական կարեւորություն:

Գրքի ռուսալեզու թարգմանությամբ եւ հատկապես տվյալ տարածաշրջանում հրատարակությամբ՝ տեղի մերօրյա հայ բնակչության համար հնարավոր է դառնում գնահատել սեփական ազգային եկեղեցական պատմական հարուստ ժառանգությունը:




Այս հրատարակումը վկայում է Միջին Ասիայում այսօր առկա կրոնական ազատության եւ հանդուրժողականության հնագույն արմատների մասին: Ազատություն, որը թույլ է տվել հային իր Մայր Եկեղեցուց ստացած հոգեւոր սնունդով նվիրաբար սիրել այդ երկրամասը հայրենիքի պես եւ բնիկ ազգերի հետ մասնակցել նրա բարօր կյանքի արարմանը:

*Տ. Զարեհ վրդ. ԿԱԲԱՂՅԱՆ*

### ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐԴԵՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

# ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

**Մեր հյուրն է Տաթեւի վանքի վանահայր Տ. Միքայել աբեղա ԳԵՎՈՐԳՅԱՆԸ**

*Սկիզբը՝ էջ 6*

Մարդիկ ամաչում, զարհուրում են, երբ որեւէ մեկն իմանում է իրենց հանցանքները: Եվ որքան ամոթալի ու զարհուրելի կլինի, երբ հավիտենական դատաստանի ժամանակ Քրիստոսի, հրեշտակների եւ ողջ մարդկության առջեւ հայտնի դառնան մարդու գործած ու նույնիսկ մտածած մեղքերն ու հանցանքները: Գր. Նարեկացին ասում է, որ վերջին դատաստանի ժամանակ մեղավոր մարդկանց մարմինների վրա կդաջվեն ու կերեւան նրանց կատարած բոլոր հանցանքներն ու սխալները: Իմանալով այս ամենը՝ ետ կանգնենք մեղքերից, գիտենանք, որ սատանան իշխանություն ունի միայն մեղսագործների վրա, ովքեր արդեն չարի իշխանության տակ են, իսկ մեղքերից հրաժարվածները՝ Աստծու իշխանության:

**- Հա՛յր սուրբ, կարո՞ղ ենք ասել, որ այս ժամանակավոր կյանքը տրված է մեզ փրկությունը, հավիտենականությունը ժառանգելու համար:**

- Գր. Տաթեւացին ասում է, որ մարդու կյանքը 3 վայրկյան է՝ ծնունդ, կյանք եւ մահ: Ի՞նչ եք կարծում, ո՞րն է ավելի երկար ժամանակ՝ վայրկյա՞նը, թե՞ հավիտենությունը: Անշուշտ՝ հավիտենությունը: Ծերության շեմին հասած յուրաքանչյուր մարդ վկայում է, որ իր կյանքն անցել է մի ակնթարթի նման: Որքան իմաստուն են այն մարդիկ, ովքեր այս կյանքում ապրում են իբրեւ պանդուխտներ՝ ստանալով Երկնքի արքայության քաղաքացիությունը: Տալիս են երեք ակնթարթը՝ շահում հավիտենականությունը: Եվ որքան անմիտ են այն մարդիկ, ովքեր զրկվում են հավիտենությունից՝ այս երեք ակնթարթն ապրելու համար:

**- Ինչո՞ւ է մարդը վախենում խոստովանել հավիտենության գոյությունը:**

- Քրիստոսը տալիս է այս հարցի պատասխանը. «Լույսը եկավ աշխարհ, սակայն մարդիկ խավարն ավելի սիրեցին, քան լույսը, որովհետեւ իրենց գործերը չար էին» (Հովհ. Գ 19): Չարագործ մարդը զարհուրում է լույսից, հավիտենական կյանքից, որովհետեւ գիտի, որ ինքն այդտեղ մաս եւ բաժին չունի: Մեղքն է մարդուն արգելում մտածել արքայության մասին: Իսկ մաքուր եւ մեղքերից թեթեւ մարդը ձգտում է դեպի լույսը, հրաժարվում է աշխարհի ամեն ունայնություններից՝ ընթանալով Երկնքի արքայության ճանապարհով:





Քրիստոսի առաջին գալուստը փրկության համար էր, սակայն երկրորդ անգամ Տերը պիտի գա՝ աշխարհը դատելու: Այս առիթով մի առակ հիշենք: Արքունական ճանապարհով ընթանում էր ամեհի ձիերի մի կառք, իսկ ճանապարհին ընկած է լինում երեխա, որին անձնվիրաբար փրկում է մի երիտասարդ: Անցնում են երկար տարիներ: Այդ մանուկը դառնում է ավազակ: Բազմաթիվ չարիքներ է գործում, մարդկանց սպանում, թալանում եւ ի վերջո՝ դատաստանի առջեւ կանգնում: Դատարանը նրան մահվան է դատապարտում: Հանկարծ դատապարտյալը նկատում է, որ դատավորի դեմքը շատ ծանոթ է: Հիշում է, որ նա այն նույն մարդն է, ով տարիներ առաջ փրկել էր իր կյանքը: Ավազակը դիմում է նրան՝ խնդրելով վերստին փրկել իրեն: Դատավորը պատասխանում է. «Այսօր ես չեմ կարող օգնել քեզ, որովհետեւ այն ժամանակ ես փրկիչ էի, իսկ այսօր՝ դատավոր»: Այսպես էլ Քրիստոսի դատաստանն է: «Հիմա է ընդունելի ժամանակը, հիմա է փրկության օրը» (տե՛ս Բ Կորնթ. Զ 2),- ինչպես ասում է Պողոս առաքյալը: Այս վայրկյանից սկսած պիտի ապաշխարենք՝ փրկության արժանանալու համար: Քրիստոսն այսօր նստած է Իր ողորմության աթոռին, իսկ երկրորդ՝ ահեղ գալստյան ժամանակ կնստի Իր դատաստանի աթոռին ու այլեւս չի փրկելու, այլ դատապարտելու է:

Փորձենք գնալ Քրիստոսի ուղենշած փրկության ճանապարհով, որպեսզի մեր կյանքն իմաստավորվի: Երանի այն մարդուն, ով իր սրտի մեջ Աստված ունի. այդպիսի մեկն ամեն ինչ ունի: Եվ վայ այն մարդուն, ով իր սրտում Աստված չունի, դժբախտ է այդպիսին, որովհետեւ, եթե անգամ ողջ աշխարհն էլ իր ոտքերի տակ ունենա, դարձյալ ոչինչ չունի: Իմ մաղթանքն է, որ Աստված բնակվի մեր սրտերում՝ իմաստավորելով մեր կյանքը:

*Հյուրընկալեց*
*Անժելա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ*

## Կիրակնօրյա վարժարանների թեմական ներկայացուցչական ժողով Մայր Աթոռում

Մարտի 10-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ տեղի ունեցավ կիրակնօրյա վարժարանների թեմական ներկայացուցչական ժողով՝ կազմակերպված Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի կողմից՝ համագործակցությամբ «Վորլդ Վիժն» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան գրասենյակի:

Ժողովին մասնակցեցին հոգեւորական եւ աշխարհական ներկայացուցիչներ Հայաստանի բոլոր թեմերից: Ժողովականները՝ նախագահությամբ ՔԴԿ-ի տնօրեն Տ. Վարդան աբղ. Նավասարդյանի, քննարկեցին կիրակնօրյա վարժարանների գործունեության կանոնակարգի նախագիծը, որը պետք է նպաստի թեմերի ենթակայության ներքո գործող շուրջ 60 կիրակնօրյա վարժարանի առավել կանոնակարգված գործունեությանը:

Կիրակնօրյա վարժարանների միասնական կրթական ծրագրի եւ գործունեության կանոնակարգի նախագիծը կքննարկվի նաեւ թեմերում եւ լրամշակվելուց հետո կներկայացվի Ամենայն Հայոց Հայրապետի հաստատմանը:



## Այց Բրյուսել

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ՝ մարտի 6-12-ը ԵՀԽ-ի «Կլոր սեղան» միջեկեղեցական բարեգործական կազմակերպության ներկայացուցիչները՝ Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Տ. Հովակիմ եպս Մանուկյանը (հոգաբարձուների խորհրդի անդամ), դոկտոր Կարեն Նազարյանը (գործադիր տնօրեն) եւ Ռուբինա Դեւրիկյանը (ծրագրերի պատասխանատու) աշխատանքային այցով եղան Բրյուսելում:

Այցի նպատակն էր ծանոթանալ Բրյուսելում եկեղեցական եւ եվրոպական կազմակերպությունների գործունեությանը, Հայաստանի հետ նրանց ունեցած կապերին եւ իրականացվող ծրագրերին, «Կլոր սեղան» բարեգործական հիմնադրամի գործունեությունը՝ որպես տարածաշրջանային եւ միջեկեղեցական կազմակերպություն, ներկայացնել եվրոպական կառույցների ներկայացուցիչներին եւ ուղիներ փնտրել համագործակցության հետագա զարգացման համար:

Այս նպատակով պատվիրակությունն աշխատանքային հանդիպումներ ունեցավ Եվրոպական խորհրդի Հարավային Կովկասի եւ Արեւելյան գործընկերության պատասխանատուների, Եվրոպական խորհրդարանի՝ արտաքին քաղաքականության եւ հարաբերությունների ներկայացուցիչների, «Եվրոդիակոնիա» կազմակերպության, Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանսի, Հայաստանի Եվրոպական ընկերներ կազմակերպության եւ մի շարք այլ եվրոպական կազմակերպությունների հետ:

Պատվիրակության անդամներին ընդունեց նաեւ Բենիլյուքս երկրների հոգեւոր հովիվ Տ. Զատիկ վրդ. Ավետիքյանը:

Ի թիվս տարբեր պայմանավորվածությունների՝ համաձայնություն ձեռք բերվեց Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանսի «Եկեղեցի եւ հասարակություն» հանձնախմբի հետ՝ համագործակցել «Սոցիալական հայեցակարգի» ստեղծման աշխատանքների եւ տարածաշրջանային երկխոսությունը խթանող ծրագրերի բնագավառներում:

## Ժողով Կիպրոսում

Մարտի 3-ին Այի Նապայի վանքում Ուղղափառ եկեղեցիների ներկայացուցիչները մեկշաբաթյա խորհրդակցություն սկսեցին՝ ուսումնասիրելու Եկեղեցիների համաշխարհային խորհրդի «Հավատք եւ կարգ» հանձնախմբի ստեղծած «Եկեղեցու բնույթն ու առաքելությունը» փաստաթուղթը: Խորհրդակցության նպատակն էր համաշխարհային քննարկման նյութ դարձած եկեղեցաբանության ընկալման վերաբերյալ ներկայացնել Ուղղափառ եկեղեցիների տեսակետը:

Հավաքը հյուրընկալում էր Կիպրոսի Ուղղափառ եկեղեցին: Շուրջ 40 մասնակից՝ հոգեւորականներ, աստվածաբաններ, երիտասարդներ՝ ԵՀԽ անդամ Արեւելյան Ուղղափառ եւ Հին Արեւելյան Ուղղափառ եկեղեցիներից: Նրանց մեջ էր նաեւ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հրատարակչական բաժնի տնօրեն, «Հավատք եւ կարգ» հանձնախմբի անդամ Տ. Նաթան եպս Հովհաննիսյանը:

Ժողովի բացումը կատարեց Կիպրոսի Ուղղափառ եկեղեցու պետ Նորին Ամենապատվություն Քրիզոստոմոս արքեպիսկոպոսը: Ապա բացման խոսքով հանդես եկավ ԵՀԽ փոխատենապետ, խորհրդակցության ատենապետ Սասիմայի Գենադիոս մետրոպոլիտը:

Ողջույնի իր խոսքում ԵՀԽ գլխավոր քարտուղար Օլավ Թվեյթն անդրադարձավ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի եկեղեցաբանական ընկալման հարցի շուրջ Ուղղափառ եկեղեցիների բերած կարեւոր ներդրմանը, խոսեց առաջիկայում Ցամայկայում կայանալիք Խաղաղության կոնֆերանսի մասին:

## Սբ Ղեւոնդյանց քահանայից տոնը Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմում

Մարտի 1-ին, Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Աղան արք. Պալեոզյանի գլխավորությամբ, Սիդնեյի Սբ Հարություն եկեղեցում հանդիսավորությամբ նշվեց Սբ Ղեւոնդյաց քահանայից տոնը: Մատուցվեց Պատարագ: Պատարագիչն էր Տ. Ավետիս քհն. Համբարձումյանը: Օրվա խորհրդի մասին հավուր պատշաճի քարոզ խոսեց Մելբուռնի համայնքի հոգեւոր հովիվ Տ. Կիրակոս աբեղա Դավթյանը: Պատարագից հետո առաջնորդարանին կից «Էդգարյան» սրահում տեղի ունեցան բանախոսություններ: Թեմայի շուրջ զեկույցներով հանդես եկան հոգեբան Իդա Սողոմոնյանը եւ լրագրող Մարինե Ավագյանը: Հանդիսությունը եզրափակվեց սրբազան հոր հայրական պատգամով ու աղոթքով:

*Լրատվական նյութերը՝*
*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ*


**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**

**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

**Հեռախոս՝ 517197**

**Էլ.փոստ՝**
**qh@etchmiadzin.am**

Ստոր. տպագր.
16.03.2011 թ.

**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**